

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէրը)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բաւին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Գործադրութեան օրինակներ.—Ներքին Տե-
ստիկութիւն. Ժողովրդական թատրոն. Երկրա-
շարժից վնասվածների օգտին. Նամակ Բագրիւն.
Նամակ Շուշու. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՏԻԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտա-
քին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՒ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցաւը.

ԳՐԻԳՈՐԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Պարսից Շահը այսօր կը հասնի Աղս-
տաֆա եւ այնուհետեւ կը շարունակէ իր
ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա
երկաթուղիով: Շահը մի օրով կանգ կառնի
Բագրու՝ ծանօթանալու հուսկ ստացած
այդ քաղաքի հետ: Բագրու Պարսից շահի
համար կարող է ունենալ շատ ուսա-
նելի կողմեր պարսկական տեսակետից:
Այդ քաղաքում մահմեդական տար-
բը ձեռք է բերել աչքի ընկնող խոշոր
հարստութիւններ, բացել է ուսու-
թիւնը և կոված կանոնաւոր դպրոց-
ներ, որոնք ուսանում են մեծ թվով
մահմեդականներ, ունի իր ձեռքին նա-
ւազան աշակերտ խոշոր ձեռնարկութիւն-
ներ, փորձում է քայլեր անել դէպի եւ-
րոպական նիստ ու կայք եւ առհասարակ
սկսել է գնահատել կրթութեան նը-
շանակութիւնը:

Երկրան կեանքի այդ փաստերը պէտք է
ունենան մի առանձին նշանակութիւն եւ
նպատակ հաստատելու այն համոզումը,
որ Պարսկաստանն էլ պէտք է այժմ վե-
րակազմէ իր կարգերը եւ կենցաղավարու-
թիւնը, որպէս զի մաքառէ իր ներկայ
թշուառութեան դէմ եւ ապահովէ իր ա-
պագան: Եւրոպայի հրաշալիքները շատե-
լին շլացնում են իրանց հոյակապու-

թեամբ. բայց մի և նոյն ժամանակ այն
հակապատկերը, որ կայ եւրոպական կեան-
քի և աւիսականի մէջ, կասկած է յարու-
ցում մարդկանց մէջ, թէ այն ինչ լաւ
է և իրագործված է եւրոպայում, անկա-
րելի է Ասիայում: Այդ պատճառով այն
փոքր, դեռ ևս աննշան առաջադիմութիւ-
նը, որ նկատվում է Վովկասի մի քանի
կենտրոնների մահմեդական տարրի մէջ,
ունի իր առանձին ուսանելի կողմեր այն
մահմեդականների համար, որոնք դեռ շա-
րունակում են ապրել հին կարգերով:

Մենք կովկասեցիներս անբաւական ենք
այն քիչ և թույլ առաջադիմութիւնից, որ
ցոյց են տալիս մեր երկրի մահմեդական-
ները. բայց երբ համեմատութիւն ենք
անում այստեղի մահմեդականների և
Պարսկաստանում ապրող մահմեդականների
մէջ, այն ժամանակ, անկասկած, պէտք է
արձանագրենք մեր երկրի մահմեդականի
կուլտուրական զերադասութիւնը: Մեր
երկրի մահմեդականը արդէն գնահատում
է, օրինակ, եւրոպական դատարանի առա-
ւելութիւնները, հարգողականութեան ձա-
նապարհների յարմարութիւնները, պատիւի,
տէլեֆոնի գոյութեան և կանոնաւոր յա-
րաբերութիւնների բարեմասնութիւնները:

Պարսկաստանը շատ հարուստ երկիր է
իր բնական պայմաններով. բայց նա չէ
կարողացել հարուստ և ապահով կեանք
ստեղծել իր ազգաբնակչութեան համար:
Սակայն թող հաստատապէս վճռէ նա
մոյնեւրո բարեփոխութիւններ իր վար-
չական և կրթական գործերում, այն ժա-
մանակ երկիրը կը զարթնի իր քնից
և նրա ազգաբնակչութիւնը կը սկսէ
կենդանութեան նշաններ ցոյց տալ, որից
նա զրկվել է ամբողջ դարեր:

Ժամանակ թանգութիւնը, ապա կարկուտը նը-
րան քար ու քանդ արին, հազիւ մի քիչ ուղղ-
վեց՝ մի գոմէշ եւ երկու եզը դաշտից աւա-
զանքը փակցրին, տարան, թողնելով նրան
խեղճ, վիզը ծուռ, ձեռքը ծոցը: Այնուհետեւ
չոր օրեր վրա հասան, որքան չորաբերկց խեղ-
ճը, մինչեւ կարողացաւ նորից իր տնտեսու-
թիւնը կարգի ձգել մի կողմից պարտքով, միւս
կողմից երեխաների բերնից կորելով, իսկ
այժմ... Օ՛, այժմ Գէվոն երջանիկ էր—գոմը
լիքն է, սաքուն՝ չէն, հարսանների ժողովա-
տելի, ճրագը՝ վառ, օջաղը՝ պայծառ, գուռը՝
բայց, նրա տանն են ապաստան գտնում և կե-
րակրվում օտարականները, աշուղները, մու-
րացիները:

Եւ մտածելով այս բոլորը՝ Գէվոն ի բոլոր
արտէ փառք տուեց Աստծուն:

Մտքերն այնպէս ակործանէին էին, պատկեր-
ներն արնքան գրաւէին, որ Գէվոն չը նկատեց
անգամ, թէ ինչպէս մօտեցաւ գիւղին: Հե-
ռուից երեւում էին ծխի բազմաթիւ պոյտ-
ներ, որոնք ոլոր մոլոր բարձրանում էին կը-
տուրների վրա: Մաքունների բուխարիներից
էին բարձրանում ծխի այդ ոլորները, Գէվոն
այդ գիտէր, այ այն էլ անշուշտ իր բու-
խարու ծուխն է, որ պալան պալան ձգվում է
դէպի վեր, տանելով իր հետ դէպի երկինք
Գէվոն գոնթիւնը, աղօթքն ու մրմունջները:
Նրան թւում էր, թէ իր տան ծխի պոյտն
աւելի հաստ է, աւելի ուժեղ, քան բոլոր միւս-
ներինը, չէն օջաղից է բարձրանում, հասկանալի
է, մտածեց Գէվոն եւ երկար նայում էր պատ-
կերին, նայում էր եւ ժպտում Ամեն բան
գեղեցիկ էր...

Հասաւ գիւղին, եւ... կանգ առաւ յանկարծ,
տեսն թէ նրա առաջը մի անաւոր անդունդ
բացվեց: Գիւղի չուրջը կարգով անկված էին
սեւ սեւ գրօշակներ՝ չարան չարան ինչպէս
մահաբեր սեւ հրեշտակներ: Ի՞նչ էր նշանա-
կում այս, Գէվոն հասկանալ չէր կարողանում,
բայց մի ներքին անհանգստութիւն, հեռաւոր,
անորոշ երկիւղ աւելի եւ աւելի մեծանում էր

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Շարաթ օրը, մայիսի 6-ին, նախկին Աւսա-
ւեան ճաշարանը, որ այժմ առդիտօրիա է
ժողովրդական դաստիարակութիւնների և ներ-
կայացուցիչների համար, կրում էր տօնակար-
կան բնաւորութիւն:

Թիֆլիսի ժողովրդական ներկայացուցիչների
առաջ թատրոնական սեկցիան տօնում էր
առաջ թատրոնի գոյութեան 150-ամեակը:
Այս նշանաւոր յօրեկանի առթիւ նախ կար-
դացվեց թատրոնի հիմնադիր Վովկովի համա-
նուն կենսագրութիւնը: Յետոյ սիրողների
խումբը պ. Պետրեկովի ղեկավարութեամբ,
ներկայացրեց Գոգոլի անանան «Բէլիգոր» կո-
միդիան: Սիրողների ներկայացումը կարելի է
համարել օրինակելի. դերերը լաւ էին խա-
նում, պիեսան խնամքով էր պատրաստված.
խաղաղօղններից աչքի էին ընկնում պ. Կօրեա-
կով Գորոշնիչի դերում, Տ. Լիւբիմովա—Նրա
կինը, պ. Շտամմ—Սիւստակով եւ պ. Պօկա-
տիլով—պատմաբան: Այս չորս անձինք ար-
ժանի են մշտական բեմի:

Ի վերջոյ կատարվեց հանդէս—ապրիլի 5-ու
Վովկովի արձանի շուրջը բեմի վրա: Բեմի մէջ-
տեղը, բարձր պատուական դասի վրա, դրված էր
պատկանելի մեծութեամբ Վովկովի մարմարեայ
կիսարձանը, ծաղկներով եւ դալար տերեւնե-
րով զարդարված, նրա չորս կողմը, գեղեցիկ
դասաւորութեամբ, աստիճանաբար շարված էին
Գոգոլի սիրելիքները—ներկայացման դերակա-
տարները: Յօդուհանին նուիրված մի ճառ ար-
տագանեց բաւական ազդու խօսքերով պ. Կօ-
րեակովի նա ասաց.

«Սրանից 150 տարի առաջ, երբ մի կողմից
Լոմօնօսով բաց արեց առաջին համա-

նրա արտում, քանի նայում էր այդ մուլլ դրօ-
շակներին, որոնք մի չարագուշակ մեղմու-
թեամբ փողփողում էին աշնանային հովի ա-
ռաջ եւ իրանց խաւար ծաղերի մէջ, ասես, աշ-
խատում էին ծածկել ինչ որ զարմուկների գաղա-
նիքներ, որ կամակոր քամին փորձում էր խլել,
փակցնել: Գէվոն էլ կուզէր իմանալ, թէ ինչ
են թագնում այդ չարագուշակ ծաղերը, բայց
մի և նոյն ժամանակ վախճում էր նրանցից:
Եւ ինչպէս չը վախճար. սեւ գիւղեր, սեւ
երկինք, սեւ օր, սեւ սիրտ, սեւից երբ է
«խէր» բան ծնվել եւ այդ սեւն էր, որից գո-
ւում էր Գէվոն եւ նրա հետ միասին այս ամ-
բողջ գիւղը, կարծես, գողգողում էր սեւի եր-
կիւղից:

—Ինչու համար են էս սեւ «բայդաղները».

հարցրեց Գէվոն առաջին պատահած գիւղա-
ցուն:

—Գիւղում ցաւ կայ, պատասխանեց գիւղա-
ցին, դժգոհ այս անախտօք հարցի համար:

—Ի՞նչպէս թէ ցաւ կայ, ինչ ցաւ...

—Ցաւ էլիլ, տաւարի ցաւ կայ:

—Է՛, ցաւ կայ, ցաւ կայ, Աստուծոյ կամքն
է, ասաց Գէվոն առնարկի հանդարտութեամբ,

էլ էս բայդաղներն ինչու են անկել:

—Ես ինչ գիտեմ, Հէրիքի կովն ո՞վ գիտէ
ինչից աստուաւ, մեր խնթը ո՞վսը աշխարհ ձէն
գցեց, տէրութիւնից էլ հրաման եկաւ, որ գե-
ղի չորս կողմն էսպէս բայդաղներ անկեն: Սեւը
բերին գեղի վրա:

—Հայ ո՞վսը վիզը կտորվէ՞ր տակը միար, ճը-
չաց Գէվոն, գեղում մի կով է աստուկ չորս
կողմներս բէխէր բայդաղներ է տնկել տուել
անաստուած, անհոգին. ցաւ, տօ էլ ինչ ցաւ.

էս բայդաղները հէնց տեղով ցաւ են էլիլ, սեւ,
բէխէր... որդիք մեռնի, ո՞վս, որդիք...

Նա գլուխը քաշ գցեց, առաջ գնաց՝ աշխա-
տելով չը նայել դրօշակներին, բայց մի քանի
քայլ հաղիւ անցած, նա ակամայ. յետ նայեց

մի քանի անգամ: Այժմ նա կտորված ու յոգ-
նած էր քայլում, տեսածը վատ, շատ վատ բան
էր: Ամեն ինչ փոխվեց նրա աչքում, զի դե

լսարանը, միւս կողմից Վովկով, առաջ առա-
ջին դերասանը, հիմնեց առաջին թատ-
րոնը: Գիտութեան, ուսման եւ բարոյականու-
թեան այս երկու տաճարները 150 տարվայ
ընթացքում այն մեծ առաջադիմութիւնը արե-
ցին, որ դժուար էր երեւակայել, բայց որի
պտուղները հասել են այսօր մեզ եւ մեր որդ-
կերանց: Թատրոնը մեծերի ուսումնարան է եւ
կրթում է նրանց, բայց այդ սուրբ տաճարը
երկայրի սուր է: Աստուած մի արագէտ, որ
նա ընկնի վատ եւ անազնիւ մարդկանց ձեռ-
քը: Այն ժամանակ նա կառավարեց անբարո-
յականութեան այնպիսի մի տիպ, որի մէջ
մինչեւ կողորդ խորասուզված գոհերին եթէ
ոչ անկարելի, դոնէ սարսափելի դժուար կը լի-
նի փրկել: Երկու բան ցանկանաւոր, առաջինը՝
որ բեմը լինի ազնիւ մարդկանց ձեռքում եւ
երկրորդ՝ որ թատրոնը իր գնելով մասնիկ դառ-
նայ թէ ունենորին եւ թէ չունենորին: Ասաց
եւ դաինեայ պատկը դրեց արձանի պատուան-
դանի վրա: Բոլոր խոնարհեցին: Երաժշտական
խումբը նուագեց երեք անգամ «Փառք քեզ»:
Ձինուորներով, արհեստագործներով եւ հասարակ
դասակարգով լիքը թատրոնը բուռն ծափա-
հարեց:

Մենք, տեղացի ազգերս, մի անգամ եւս ցոյց
տուինք մեր չօվինիստական վերաբերմունքը
դէպի ընդհանուր իդէան. մեր փոքրիկ տօնը
մեծ աղմուկներով ենք տօնում, իսկ այսպիսի
մի պատկանելի յօրեկանին փառաւորապէս
բացակայում ենք: Միթէ հայերս քիչ ենք օգաւ-
վել եւ կրթվել առաջը գրականութիւնից եւ
բեմից, բայց հայոց բեմի կողմից ոչ մի չունչ
չերեաց այդ երեկոյ:

Նոյն հանդէսը կրկնվելու է մայիսի 16-ին
եւ 17-ին:

Կարա-Մուրզա

ուրախ էր, երբ նա հեռացաւ, իսկ այժմ գրա-
նում էր սգաւոր, սեւաւոր, տխուր...

Նոյն օրը, երեկոյան, Գէվոն գլխակոր ու
մուլլ նստած էր բուխարու կողքին, երբ գիւ-
ղացիք նոյնպէս մտազբաղ՝ կամայ-կամայ լըց-
վեցին սաքուն: Բուխարու հակառակ կողմում
նստած էր մի ծերունի՝ աղեղաղ մաղերով ու
միրուքով, նա շատ էր ծեր, ասես, հին տա-
րիներից մնացած մի կենդանի աւանդութիւն
լինէր այդ պատկանելի նախապետը: Նա ար-
դէն հազիւ էր լսում, ձեռները գողգողում էին,
բայց ակտակ, երկար յօնքերի տակ թաղնված
աչքերը դեռ տեսնում էին: Աշխարհի վայելք-
ներից նրան մնացել էր միայն իր չիւրիւրը, որ
նա ծխում էր աննդհատ եւ սաքունի այս տաք
անկիւնը, բուխարու կողքին, որտեղից նա եր-
բէք չէր հեռանում, կարծես, բուսած լինէր իր
տեղում: Նա քիչ էր խօսում, բայց երբ խօ-
սում էր, ամենքը լսում էին. հին փորձերի,
հին խորհուրդների, հին ցաւերի, մի ամբողջ
ժողովրդական իմաստութեան շտեմարան էր
այդ աղեղաղ գլուխը: Ինչից չէր տեսել նա...
Գիւղացիք ծանր պարագաներում նրա չըր-
թունքների շարժումները պատգամի տեղ էին
ընդունում եւ լարված լսում էին հազիւ հաս-
կանալի բառերը, որ նա արտասանում էր շու-
կով: Գիւղեգնանին այնքան մօտիկ այս ծեր գո-
յութիւնը այսօր մի առանձին ցուրտ աղբը-
ցութիւն էր անուած գիւղացիների խոռված
հոգիների վրա: Հեռու, գոմի խաւար խորու-
թեան մէջ, լսվում էր մերթ անասունների փրն-
չոցը եւ մերթ մեղմ որոճի ձայնը: Բուխարու
մէջ ծխախառն բացերով վառվում էին աթարի
մի քանի հաստ կտորներ: Ներս մտաւ ֆոօսենց
թաթոսը. նա տխուր էր, ձեռքը ծոցում, հազիւ
լարեւ տուեց, նստեց եւ լռեց: Գէվոն ամենից
շուտ նկատեց նրա տխրութիւնը:

—Հը, ինչ կայ, ախպէր թաթոս, քէֆդ լաւ
է, հիւանդ ես, ինչ է...

—Ո՛ր էր թէ ես հիւանդ լինէի, եղինքն են
կպել, տուես կը քանդվի, ծուխ կը մարի:

Գէվոն սուս կացաւ. նա յիշեց իր առաւօ-

17-18, 1888-1889, p. 1, 11

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.